ապրվող մտածողության որակ, մյուս կողմից՝ զուտ գրական օրինակ, իբրև խոսքի կառուցման կերպ: Փիլիպպոս կաթողիկոսի վախճանի նկարագրության մեջ Դավրիժեցին իբրև պատմիչ հարազատորեն փոխանցում է նրա վերջին խոսքերը: Այս դեպքում կաթողիկոսի խոսքն է կառուցված ինտերտեքստային հերթագայություններով (տե՛ս էջ 278–279):

Նույն կերպ՝ նաև Մելքիսեթ վարդապետի՝ մահվանից առաջ իր աշակերտների առջև ասված խոսքում է: Այստեղ, սակայն, թաքնված ինտերտեքստ է. Մելքիսեթ վարդապետը, Դավրիժեցու վկայությամբ, իր խոսքում օգտագործում է «Երեք ծառաների մասին առակի» (Մատթեոս, ԻԵ, 14–30, նաև՝ Ղուկաս, ԺԹ, 11–27) «Պարտ էր քեզ արկանել զարծաթն իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէր զիմն» հատվածը. «...բայց արդ՝ որովհետև դաս ասացի ձեզ, և զընկալեալն ի Տեառնէ ***զարծաթ բանին արկի ի սեղանաւորսդ*** այսուհետև փոխանակ տրտմութեան՝ ունիմ մխիթարութիւն, զի թէպէտ ես մեռանիմ, այլ սերմանեալն առ ձեզ բան Տեառն մնայ յաշխարհի...» (էջ 317): Մյուս կողմից՝ ինտերտեքստը վերաիմաստավորվել է. սա աստվածաշնչյան խոսքի իրականացման փաստումն է:

Աստվածաշնչյան ինտերտեքստը կիրառվում է նաև պատմագրական երկերում շատ տարածված դիմանկարները կերտելիս: Դիմանկարի ոչ ավարտուն, մասնավոր վիճակը տվյալ անձնավորությանը նկարագրելու միջոցն է: Հետևյալ օրինակում Խաչատուր վարդապետի բնավորության դրական գծերը Դավրիժեցին ներկայացրել է սեփական խոսքի և ինտերտեքստի զուգահեռ կիրառումներով. «Իսկ վարդապետն ըստ իւրում քաղցր և հեզ բնութեանն ոչ առ երեսս յանդիմանէր զՆիկոլն, այլ մեղմ և խրատօրէն ինքն և նա միայն խօսէր ընդ նմա, ***ըստ պատուիրանին Տեառն թէ, ասասջիր նմա, յորժամ դու և նա միայն իցէք***» (էջ 299, հղվել է՝ Մատթեոս, ԺԸ, 15): Մեկ այլ տեղում Պողոս առաքյալի հետևյալ խոսքերի (Թուղթ առ Գաղատացիս, Ե, 24). «Իսկ որ Քրիստոսեանք